

չբռնան, որ տեսում է մոտ երեք շաբաթ, 2. Մերրոտություն օրվա համար նախատեսված նախամկրտական արարողություններ, որոնցից չորսը՝ հրավիրումը, հորգորական աղոթքը, հրաժարումը սուտանայից և հավատի խոստովանությունը կատարվում են եկեղեցու դռանը, իսկ երկուսը՝ յուզի օրհնությունն ու ջրի օրհնությունը, անմիջապես եկեղեցի մտնելուց հետո, 3. Բուն մկրտությունը, կազմված հետևյալ երեք արարողություններից՝ դազաթի եռակի ցողումը, մարմնի եռակի ընկղմումը ջրի մեջ և ողջ մարմնի լվացումը, 4. Մկրտությունից հետո մարմնի անգամների օծումը (որը, ի դեպ, սկզբնական դարերում կատարվել է մկրտությունից անօջ, այն էլ սահմանափակելով միայն գլխի օծումով) և, վերջապես, մկրտվողի հաղորդությունն ու արձակումը (էջ 335, 370—371, 433, 445): Սխալական մասնատմաների համեմատական քննությունը հեղինակին նորից հանգեցնում է

այն եզրակացության, որ մկրտության հայկական հնագույն արարողությունը՝ ներկայացված Ագաթանգեղոսի պատմության մեջ և երկաթագիր Մաշտոցներում, ծագում է ասորական նախատիպից, սակայն Մաշտոցների պարունակած մկրտության կանոնը կրել է նաև ասորա-պարսկական ու կապադովկիական ավանդույթի ազդեցությունը (էջ 448): Այսպիսով, հայ-ասորական եկեղեցական-մշակութային հարաբերությունները, որոնք մինչ այժմ ուսումնասիրվել են պատմագրական աղբյուրների և ասորերենից կատարված թարգմանությունների վերլուծության հիման վրա, Գ. Վինկլերի աշխատության շնորհիվ իրենց լուսարանությունն են գտնում նաև ծիսագրության քննության տվյալներով: Մեր կարծիքով սա է գրախոսվող աշխատության հիմնական արժանիքը:

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԿԻՄ ՍՈՒԻՍՏԱՆ, ԳՐԻԳՈՐ ՆԱՊԻԱՆՊԱՆԻՆ ԻՄ ԼՄԱՏԵՆԱԳՐՈՒՄԻ ԱՄԵՂ,
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1983, 263 էջ:**

Հայ թարգմանական գրական և գիտական ժառանգության մեջ հատուկ տեղ ու նշանակություն ունի «երեք մեծ կապադովկիացիների»՝ Իսարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու մատենագրական վաստակը, որը հայ իրականության մեջ հայտնի է եղել դեռ նախքան մեր լեզվի հայրենագիր դառնալը: Այնուհետև, թարգմանվելով հայերեն, ողջ միջնադարում և նույնիսկ մինչև մեր օրերը արժանացել է սեփական ուշադրության:

Ինքնին հասկանալի է վերոհիշյալ հուշարձաններին առնչվող ուսումնասիրությունների անհրաժեշտությունն ու բացառիկ շահագրգռությունը գիտության համար ընդհանրապես, հայագիտության համար մասնավորապես: Ընդգծելով հանդերձ նախընթաց հայագետների ծառայությունները այս ասպարեզում, պետք չէ անտեսել, որ մեծ ծավալի և լայն ընդգրկումների գիտահետազոտական աշխատանքների պակասը դեռ պզտի է: Կիմ Մուրադյանն այսօր այն քչերից մեկն է, որն իր գիտական, բանասիրական-բնագրագիտական ջանքերը ներդնում է դրանց ուսումնասիրության, արժեքավորման և հրապարակման շնորհակալ գործում: Նա արդեն լույս է ընծայել իր երկրորդ մենագրությունը, որը և հարկ ենք համարում ներկայացնել մասնագետ քննորդին:

Գրիգոր Նազիանզացին (Աստվածաբան) քրիստոնյա եկեղեցու վաղ միջնադարի (328—389 թթ.) հռչակավոր հայրերից է, եկեղեցական-հասարակական գործիչ, գիտնական ու մատենագիր: Նորա կյանքն ու գործունեությունը գիտական աշխարհին ծանոթ են: Մասնավոր ըլուզանդագիտության մեջ նրա մատենագրական վաստակի ուսումնասիրությունը ունի հին և արդյունալի պատմություն: Սակայն վաղուց նկատված իրողություն էր նաև, որ այդ կապադոկիայում կուտակված արժեքավոր շատ նյութ կա հայ մատենագրության մեջ: Վստահ կարելի է ասել, որ համառ ու երկարասլ քանքերով բացահայտված և այս աշխատության մեջ բերված հայերեն նյութը գերազանցում է բոլոր հնթադրությունները:

Առավելագույն չափով ձեռագիր այս փաստագրական նյութի ուշադիր ու բարեխիղճ քննությանը հեղինակը նախ պարզաբանում է, թե հայ իրականության մեջ ի՞նչ էր հայտնի նրա կյանքի ու գործունեության մասին, ինչպե՞ս էին ընդունում և գնահատում նրա անձն ու վաստակը, թե ինչու՞ պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր շարժառիթներով են դիմել և անդրադարձել նրան: Կասկած չկա, որ նշված պարզաբանումները շատ են հետաքրքրելու նաև օտար համապատասխան մասնագետներին և այս առումով դրանց շահեկանությունը ակնհայտ է:

Սակայն սույն աշխատության հիմնական արժեքն ու նշանակությունը բանասիրական-բնագրագիտական և աղբյուրագիտական հարցերի համակողմանի լուսաբանության, առանձին հատկանշական երևույթների ու խնդիրների արժեքավորման մեջ է: Իսկ այդ հարցերն ու խնդիրները շատ են, բարդ ու խրթին, բայց կարևոր են: Հիշենք, որ սկսած V դարից մինչև ուշ միջնադար Գրիգոր Նազիանզացու երկերը շարունակ եղել են հայ մատենագիրների տեսադաշտում, հիշատակվել են վկայակոչվել են հաճախ, օգտագործվել են իբրև սկզբնաղբյուր, պարբերություններով ու երբեմն ընդարձակ հատվածներով ընդմիջարկվել են նրանց գործերում: Նազիանզացու գրվածքները արժանացել են հարյուրավոր ձեռագիր ընդօրինակությունների: Այդ ընթացքում առաջացել են բազմաթիվ ու բազմազան բնագրական աղավաղումներ, սխալ վերագրումներ, խմբագրական միջամտություններ, հեղինակային պատկանելության շփոթ և այլ բնույթի անճշտություններ: Մուրադյանի մենագրությունը նման հարցերին ու խնդիրներին շատերին պատասխանելու մի լուրջ փորձ է:

Նկատի առնելով նախորդ հետազոտողների կարևոր ավանդը և գերազանցապես հիմնվելով ձեռագրական վկայությունների վրա, նա հաստատում է, որ Գրիգոր Նյուսացուն վերագրված «Առորս», «Խօսք ի նոր կիրակէն» և «Ի ժողովողն» երկերը անառակելիորեն պատկանում են Գրիգոր Նազիանզացու գրչին և, հակառակը, իրեն հն վերագրվել «Առ այնոսիկ...», «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ձառերը, որոնց իրական հեղինակը Գրիգոր Նյուսացին է (էջ 52—56): Շփոթվել են նաև Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու որոշ երկեր: Պարզվում է, որ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու «Տեսութիւն յաղագս հուսատոյ...» հանրաժանորթ աշխատությունը քանիցս խմբագրվել, փոփոխվել է, որի հենքի վրա գոյացել են երեք «կեղծ» խմբագրություններ, բայց շարունակել են կրել բուն հեղինակները անունները:

Հայ և բյուզանդական գրականության առավել նշանակալից առնչություններից է Գրիգոր Նազիանզացու «Գիրք ժողովածուների»՝ հայ իրականության մեջ թարգմանաբար լայն տարածում գտած լինելու բուն փաստը: Այդ ժողովածուները հայ մատենագրության մեջ հայտնի են «Առ որս», «Յաղթեցայ», «Քրիստոս ծնեալ» և «Որք յնիպոսոսն են» անուններով, որոնք ծագել են նրանց սկզբնատողերի համապատասխան սկզբածրերից, թեև հանդիպում են նաև դրանց այլ անվանումներ: Այս առնչությամբ էլ հեղինակն իր որոնումները մասնավորում է առավելապես հայ մատենագրության մեջ և եկեղեցական-հասարակական կյանքի ոլորտներում տեղ գտած մատենագիտական, բնագրական, աղբյուրագիտական, թարգմանական, խմբագրական և գաղափարական անդրադարձումների, կողմնորոշման ու գնահատումների շուրջ: Դրանք շատ են, ջանադիր փնտրված գտնված են և լուսաբանված ու իմաստավորված ըստ ամենայնի, բարեխղճությամբ և գործիմացությամբ:

Դժվարահաճ խնդիրներից են Գրիգոր Նազիանզացու որոշ երկերի թարգմանություն, թարգմանիչների ու թարգմանության ժամանակի հետևանքով անորոշությունն ու բարդությունը: Սակավ և շփոթ են փաստերը: Այս դեպքում էլ, չնայած այդ դժվարությանը, հեղինակը ավելի որոշակիության ու ճշգրտության է հասնում. թեև «ոչ ոչ միշտ» Համոգիչ են Գրիգոր Նազիանզացու ձառերի ու թղթերի բնագրական, աղբյուրագիտական, գաղափարական ուղղակի առնչությունների նրա բացահայտումները Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Ստեփանոս Սյունեցու, Ստեփանոս Ասողկի, Հովհաննես Սարկավազի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի, Վարդան Այգեկցու, Հովհաննես Երզնկացու մատենագրական ժառանգության մեջ: Ուշագրավ են հեղինակի բնագրական համադրումներն ու բնագրագիտական և աղբյուրագիտական հետազոտությունները:

Ուշագրության են արժանի նաև հայ մատենագիրների մեկնությունները՝ նվիրված Գրիգոր Նազիանզացու հիշյալ գրքերին: Հետազոտողը ցույց է տալիս, որ Գրիգոր Նազիանզացու գործերը առատորեն սնուցիչ հիմք են հանդիսացել հայ հեղինակների ոչ միայն կրոնաաղավաղական, այլև գիտական-փիլիսոփայական ընդհանրացումների համար: Բանասերը գտել ու հետազոտել է շուրջ 200 ձեռագիր մատյաններ, բազմաթիվ մեծ ու փոքր ուսումնասիրություններ: Սույն մենագրությունը հայագիտության (և ոչ միայն հայագիտության) համար անտարակուս կարևոր է և գնահատելի:

Գրախոսվող աշխատության ուսումնասիրության բաժինը յուրովի հիմնավորված և հարուստացված է աղբյուր հավելվածում՝ հրատարակված երեք ձառերի բնագրերով, որոնք հրատարակվում են առաջին անգամ և ուշագրության են արժանի ամենից առաջ որպես թարգմանական հուշարձաններ: Մասնագիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում դրանց լեզուն, լրատագանքը: Հրատարակվող բնագրերից «Ի Կեսարիոս եղբայրն իւր» ձառի հայերեն թարգմանությունից ընդարձակ բանաբաղումներ ունի Հովհաննես Երզնկացին:

Ինչպես նկատեցինք վերևում, գրախոսվող մենագրության ոչ բոլոր հարցերն են միևնույն խորությամբ հետազոտված ու պատշաճ լուսաբան-

ված, և ոչ բոլոր ենթադրություններն ու եզրակացություններն են աներկբայելի: Մեր կարծիքով Հայ թարգմանական գրականության բոլոր հնագույն կոթողները բնագրական-բանասիրական և աղբյուրագիտական քննության ենթարկելիս անպայման պիտի հաշվի առնել դրանց նաև ասոցիերենից թարգմանված լինելու հնարավորությունը, այսպես, ինչպես փորձը ցույց է տալիս, կարող են լինել անակնկալներ: Այս դեպքում ևս նման աշխատանքը անհրաժեշտ էր և, ինչ խոսք, ուսումնասիրությունը կրկնակի կշահեր:

Թեև ինքնին ուշադրության արժանի է Գրիգոր Նազիանզացու «Դամբանականի» և Կորյունի «Վարք Մաշտոցի» աղբյուրագիտական առնչությունների վերաբերյալ հարցի առաջադրումը, սակայն, կարծում ենք, առկա փաստերի հիման վրա կատարվող հետազոտությունները չի կարելի համոզիչ համարել: «Դամբանականի» և Կորյունի նշված երկի կառուցվածքային ընդհանրությունները բոլորովին էլ անմիջականորեն մեկը մյուսից չեն բխում: Նախ որ դրանք շատ ակներև չեն, երկրորդ՝ ընդհանուր են նման բոլոր երկերի համար, երրորդ՝ ժանրային կանոնականացված սկզբունքների սովորական դրսևորումներ են: Զուգահեռ բերված հատվածները այնպիսին են, որոնք կարող էին գրվել մեկը մյուսից լիովին անկախ: Միջին անպայման Նազիանզացուց են դալիս Կորյունի հետևյալ բառերն ու արտահայտությունները.

Նազիանզացի

բանից առաջի դնելով մեծն Բասիլիոս
առաջի դնել... առաջի կացուցե
քաջահաճոյ լինել
առաջի դնելով բանիս զնորա արժան
զաստուածային գիրսն ընթեռնոյր
գետնախշտութիւն... հեշտալի ընթրիք

Կորյուն

բանիս նշանակեմք... Մաշտոց անուն
առաջի դիցի
քաջութեամբ... հաճոյ լինէր
զառաջի եղեալն մատենագրել
ընթերցուածոց աստուածեղէն գրոց
բանքարաճաշակութեանց. գետնատարած անկողնոց (էջ 116—117):

Ըստ այսմ փորը-ինչ բռնազբոսիկ են թվում հետազոտողի հետևյալ եզրահանգումները. «Ահա այս իրողությունն էլ իր հերթին հնարավորություն

է տալիս պնդելու, թե «Վարք Մաշտոցի» անմիջական աղբյուրը «Դամբանականի» հայերեն թարգմանությունն է» (էջ 120): Պիտի նկատենք, որ Կորյունը Նազիանզացու հետևություններ...» (էջ 122), «Նազիանզացու երկի հայերեն թարգմանությունը կատարված պիտի լինի նախքան Հայ ինքնուրույն մատենագրության առաջին գործի հեղինակվելը, այսինքն մինչև 443—451 թթ.» (էջ 123), «Դամբանականի» հին հայերեն թարգմանությունը հարկադրում է վերանայել հունաբան դպրոցի հայագիտության մեջ ընդունված էտապներն ու ժամանակագրությունը» (էջ 252): Կարծում ենք, գրախոսվող գրքի հեղինակը այս ուղղությամբ լուրջ ջանքեր պիտի թափի մասնագետին համոզելու համար:

Եթե հեղինակը հասնում է մինչև XIII դարի վերջերը, նույնիսկ XIV դարի սկիզբը (Հովհաննես Երզնկացի), ցույց տալու համար Գրիգոր Նազիանզացու բնագրերի աղբյուրագիտական առնչությունները, ապա պիտի նկատի առնվեն նաև Հովհաննես Վանականը, Վարդան Արևելցին (միայն մի առիթով է հիշվում) և այլք:

Նվա մի դիտողություն. լեզվական շատ ճշգրիտ ու լավ շարադրանքի մեջ երբեմն ծանրաշունչ և ոչ հստակ ձևակերպումներ կան: Օրինակ. «Աթենքի համալսարանում Նազիանզացուն որպես աշխատակից պահելու պնդում—հավաստիացումներն այնքան հիմնավոր էին, որ ընդդիմացումն անհնարին է դառնում» (էջ 20): Մեղ թվում է, ավելի լավ կլիներ, եթե գրքում խնայվեին «քաղում-հղում», «մուտք-առաջարան», «խորադիր-հղում», «թարգմանություն-խմբագրություն», «նախապատմություն-պատճառաբանում», «դիտողություն-խորհրդածություն», «ևրարողություն-սովորություն», «պատասխան-առարկություն», «գնահատություն-արժեքավորում» և նման բառազուգորդումները, որոնք երբեմն իրար կրկնում կամ ժխտում, կամ էլ պարզապես անտեղի են:

Այս կարգի թերացումներով հանդերձ՝ Կիմ Մուրադյանի մենագրությունը լարված որոնումների, բարդ ու պատասխանատու քննությունների, գիտական բարեխղճության և հմտության արդյունք է, հայագիտության և բյուզանդագիտության զույգ մարզերի համար միանգամայն պիտանի և արժեքավոր ուսումնասիրություն:

Փ. Փ. ԱՆԹԱՐՅԱՆ